ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ:

Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԵԿՏՈՐ
ՊՐՈՖԵՍՈՐ ՍՐԲՈՒՀԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ
13.12.2024թ.

ԿԱՐԾԻՔ

Իվան Անդրեի Սեմյանի «Սինտաշտյան և Պետրովսկյան բրոնզեդարյան մշակույթների ռազմական գործը փորձարարական հնագիտության լույսի ներքո» Է. 00.03 «Հնագիտություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

2024 թ. դեկտեմբերի 13-ին տեղի ունեցավ Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ հայոց պատմության ամբիոնի նիստը, որին մասնակցում էին ամբիոնի վարիչի պաշտոնակատար, պատմ. գիտ. թեկնածու, պրոֆեսոր Է. Գևորգյանը, պատմ. գիտ. դոկտորներ, պրոֆեսորներ Ա. Փիլիպոսյանը, Վ. Վիրաբյանը, Ս. Պողոսյանը, Խ. Ստեփանյանը, պատմ. գիտ. թեկնածուներ, դոցենտներ Է. Հովհաննիսյանը, Լ. Սիմոնյանը, Է. Մելքոնյանը, Ա. Եփրիկյանը:

Քննարկվեց Իվան Անդրեի Սեմյանի «Սինտաշտյան և Պետրովսկյան բրոնզեդարյան մշակույթների ռազմական գործը փորձարարական հնագիտության լույսի ներքո» թեկնածուական ատենախոսությունը՝ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան հայցելու համար:

Ելույթ ունեցան ատենախոսության գրախոսներ, պատմ. գիտ. թեկնածու, պրոֆեսոր Է. Գևորգյանը, պատմ. գիտ. դոկտոր, պրոֆ. Ա. Փիլիպոսյանը, ովքեր

հրապարակեցին իրենց գրավոր կարծիքները: Պատասխան ելույթով հանդես եկավ ատենախոս Ի. Սեմյանը:

Քննարկման արդյունքներն ամփոփեց ամբիոնի վարիչի պաշտոնակատար, պատմ. գիտ. թեկնածու, պրոֆեսոր Է. Գևորգյանը:

Իվան Անդրեի Սեմյանի «Սինտաշտյան և պետրովսկյան բրոնզեդարյան մշակույթների ռազմական գործը փորձարարական հնագիտության լույսի ներքո» խորագրով պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը վերաբերում է շատ հետաքրքիր և ներկայումս Եվրասիական տարածաշրջանի կենտրոնական հատվածի մ.թ.ա. III հազ. վերջի ու և II հազ. առաջին կեսի բազմաբնույթ պատմամշակութային իրողությունների գիտահետազոտական և գիտագործնական ուսումնասիրությանը: Դրված խնդիրն ու դրա իրականացման եղանակներն առավել քան արդիական են ու կարևոր, քանի որ հնագիտական հարուստ նյութի, գրավոր սկզբնաղբյուրների և հին բանավոր զրույցների տեղեկատվության հիման վրա, այս կամ այն չափով արծարծում են նաև հնդեվրոպական լեզուների հնագույն կրողներին, նրանց մշակույթին, կենսագործունեությանը, նախահայրենիքին և պարբերական տեղաշարժերին առնչվող մի շարք հիմնահարցեր: Վերջիններս էական նշանակություն ունեն նաև Հայկական լեռնաշխարհի բրոնզ-երկաթեդարյան պարբերաշրջանների ռազմաքաղաքական, սոցիալ-տնտեսական և էթնոմշակութային գործընթացների վերհանման, արժևորման ու հիմնավոր մեկնաբանման համար:

Սույն տենախոսության մեջ, վերը ներկայացված համատեքստում առավելապես քննարկվել է ՌԴ Հարավարևմտյան Ուրալում՝ և Ղազախստանի սահմանային բավական լայն գոտում գտնվող, սինտաշտյան (մ.թ.ա. III հազ. վերջ – մ.թ.ա. II առաջին քառորդ) և պետրովյան (մ.թ.ա. II հազ. առաջին քառորդ) մշակույթների ընձեռած հնագիտական համակողմանի տեղեկատվությունը:

Ատենախոսությունը կազմված է ներածությունից, 3 գլուխներից, օգտագործված սկզբնաղբյուրների ու գրականության ցանկից (ընդհանուր առմամբ՝ 491 միավոր), վերջաբանից, ինչպես նաև նկարներն ու տվյալների շտեմարանը ներառող 2 հավելվածներից (ընդհանուր առմամբ՝ 194 նկար և 122 բազային տվյալ): Աշխատանքի ողջ ծավալը (առանց հավելվածների) A4 ֆորմատի 203 էջ է:

Ներածության մեջ (էջ 4-10) հեղինակն անդրադարձել է կատարված աշխատանքի արդիականությանը, նպատակին ու խնդիրներին: Նրա կարծիքով, նման ուղղվածություն ունեցող գիտական տեսլականի ձևակերպման և պատշաճ ներկայացման համար առաջնային են հետևյալ հիմնական հարցադրումների գիտագործնական պատասխանները:

• Մեկնաբանել բրոնզեդարյան մինչպետական հասարակություններում հակամարտությունների ձևավորման հիմնական շարժառիթներն ու սահմանել դրանց ուսումնասիրման մասնագիտական գործիքակազմը:

• Հնագիտական նոր հայտնագործությունների հենքի վրա կազմել բրոնզեդարյան պարբերաշրջանի ռազմական գործի բնութագրիչների շտեմարանը:

• Տեխնիկական գիտաճյուղերի ընձեռած հնարավորությունների միջոցով իրականացնել բրոնզեդարյան ռազմական գործին առնչվող արդի փորձարարական հետազոտություններ:

• Վերջիններիս արդյունքների միջոցով ձևակերպել ու հիմնավորել սինտաշտյան և պետրովյան մշակույթներում վերականգնվող ռազմական գործի բրոնզեդարյան ընթացակարգը:

Ներածության մեջ մանրամասը ներկայացված ու մեկնաբանված են ատենախոսության աղբյուրագիտական հենքը, տարածական ու ժամանակագրական սահմանները, հիմնական եզրույթներն ու հասկացությունները, տեսական-մեթոդաբանական բազան, գիտական նորույթը և այլն:

Ատենախոսության առաջին գլուխը (էջ 11-41) կրում է «Սինտաշտյան և պետրովսկյան հնությունների ռազմական ասպեկտի ուսումնասիրման պատմությունը» խորագիրը: Նրանում ատենախոսն ի մի է բերել և քննության առել խնդրո առարկա բրոնզեդարյան մշակույթներին պատկանող հնավայրերից հայտնաբերված և ռազմական գործին առնչվող համապատասխան արտեֆաստերի վերաբերյալ XX դ. վերջին տասնամյակում և XXI դ. առաջին քառորդին առաջ քաշված կարծիքների, մեկնաբանությունների և արված ուսումնասիրությունների համակողմանի քննական պատմությունը:

Այս գլխի 4 ենթագլուխներում մանրամասը քննության են առնվել բրոնզի պարբերաշրջանում Եվրասիական տարածաշրջանում տեղի ունեցած առավել հայտնի

պատերազմներին առնչվող տեղեկատվությունը և այն մեկնաբանվել է սինտաշտյան և պետրովյան մշակույթներին պատկանող հնավայրերում ֆիքսված թաղման ծեսի, բնակտարածքի կազմակերպման ու դրան առնչվող ամրաշինական գործընթացների իրականացման, ինչպես նաև անվավոր փոխադրամիջոցներին վերաբերող հիմնախնդիրների ուսումնասիրության պատմության համատեքստում:

Ատենախոսության երկրորդ գլուխը (էջ 42-97) կրում է «Սպառազինության համալիրի, ռազմատեխնիկական միջոցների և ամրաշինական գործի բնութագրությունն ու տիպաբանությունը» խորագիրը: Այն բաժանված է չորս ենթագլուխների: Դրանցից առաջին երկուսը համապատասխանաբար ներկայացնում են մերձավոր, ապա և հեռավար մարտին հատուկ զինատեսակների մանրամասը նկարագրերն ու վերլուծությունները: Ի մասնավորի, որպես մերձավոր մարտի համար կիրառվող զինատեսակներ, քննարկվել են նիզակներն ու տեգերը, մարտական և ծիսակարգավիճակային խորհրդանշաններ հանդիսացող սակրերը, գուրզերը, դաշույններն ու դանակները: Հեռավար կռվի ժամանակ կիրառվող զինատեսակների մեջ ներառվել են նետասլաքներն ու սինտաշտյան աղեղները: Երկրորդ գլխի երրորդ ենթագլուխը նվիրված է սինտաշտյան և պետրովյան ուշբրոնզեդարյան անվավոր մարտական փոխադրամիջոցներին: Այստեղ քննության են առնված տարբեր դամբարանադաշտերում (Բեստմակ, Վետլյանկա IV, Կամեննիյ Ամբար, Սինտաշտա, Սոլնցե II, Բերլիկ II, Սատան, Կրիվոյե օզերո և Ուլուբայ) պեղված անվավոր մարտակառքերի և/կամ դրանց մնացորդների վերաբերյալ տվյալները:

Երկրորդ գլխի չորրորդ ենթագլուխը նվիրված է սինտաշտյան և պետրովյան մշակույթներին պատկանող բնակավայրերի ամրաշինությանը: Այստեղ քննարվել են Սինտաշտա, Արկայիմ, Ուստյե I. Ստեպնոյե, Ալանդսկոյե, Անդրեևսկոե, Բերսուատ, Բախտա, Ծուրումբայ, Իսինեյ, Կամեննիյ Ամբար, Կույսակ և քննարկվող տարածաշրջանի այլ համաժամանակյա հնավայրերում առկա ամրաշինական համալիրների կառուցվածքային առանձնահատկությունները:

Գլխի վերջում սինտաշտյան և պետրովյան բրոնզեդարյան հասարակությունների կյանքում կարևոր դեր ունեցած ընդհարումների, մարտավարության ու ամրաշինական կառույցների վերաբերյալ արված են համապատասխան ընդհանրացումներ ու մեկնաբանություններ:

Ատենախոսության վերջին՝ երրորդ գլուխը (էջ 98-158) վերնագրված է՝ «Սինտատշտյան և պետրովսկյան մշակույթների ռազմական գործի վերակազմությունը հնագիտական փորձարարության օգնությամբ»: Այն կազմված է երեք ենթագլուխներից: Առաջին ենթագլխում ներկայացված են հեռահար զենքի վերակազմության խնդիրները: Որպես վերականգնման աշխատանքների իրականացման հիմք, ատենախոսն առաջնորդվել է փորձարարական հնագիտության երեք հիմնարար սկզբունքներով՝

1. Նույնական նյութերի օգտագործում,
2. Հնում օգտագործված տեխնոլոգիական եղանակներին ու կարողություններին հարիր՝ տեխնիկական նույնական հնարքների կիրառում,
3. Ժամանակակից տեխնոլոգիաների օգտագործում միայն այն դեպքում, եթե դրանք չեն ազդում վերջնարդյունքի վրա:

Ահա առաջնորդվելով այս սկզբունքով, ատենախոսն իրականացրել է հեռահար զինատեսակների, սինտաշտյան աղեղի և կապարճի վերականգնման աշխատանքները:

Երրորդ գլխի երկրորդ ենթագլուխը վերաբերում է անվավոր փոխադրամիջոցների համալիրի և սինտաշտյան զինվորի մարտական հանդերձանքի մոդելավորման ու վերականգնման գործընթացին և դրա իրագործման տեխնիկատեխնոլոգիական մանրամասներին: Ձեռքի տակ առկա հնագիտական արտեֆակտների հիման վրա ատենախոսին հաջողվել է անձամբ վերականգնել մարտակառքի տարբեր հատվածներն ու ամբողջապես հավաքել փոխադրամիջոցը: Նույն կերպ նա իրականացրել է նաև սինտաշտյան բրոնզեդարյան զինվորի հանդրձանքի իրական վերարտադրումը:

Իվան Սեմյանի ատենախոսության երրորդ գլխի երրորդ ենթագլուխը ներկայացնում է սինտաշտյան և պետրովյան բրոնզեդարյան մշակույթների ամրաշինական կառույցների վերականգնման մանրամասները:

Վերջաբանում ատենախոսության հեղինակը, ամենայն մանրամասնությամբ, ի մի է բերել աշխատանքի ներածության մեջ և երեք գլուխներում ներկայացված դիտարկումների, ենթադրությունների, հետազոտությունների ու մեկնաբանությունների ամփոփ շարադարանքը:

Կատարված է բարդ, հիմնավոր և նպատակային ուսումնասիրություն, որն արժանի է դրվատանքի: Աշխատանքն իրականացված է հանգիտական հարուստ

նյութերի լայն ընտրանու ներգրավմամբ, ինչն առավել ընկալելի ու հավաստի է դարձնում գիտագործնական ուսումնասիրությունը: Օգտագործված մեծաքանակ ու բազմալեզու գրականությունը խոսում է հեղինակի լայն մտահորիզոնի, անհրաժեշտ մասնագիտական գրականության մեջ հիմնարար հրատարակությունները նպատակային կիրառելու, ինչպես նաև ուսումնասիրվող նյութը տարածաշրջանի համաժամանակյա պատմամշակութային համայնապատկերի վրա ներկայացնելու հետազոտողի կարողությունների մասին: Այդ գործում էական նշանակություն ունի նաև այն հանգամանքը, որ ատենախոսը երկար տարիներ զբաղվել է փորձարարական հնագիտությամբ, անձամբ վերականգնել ու փորձարկել է մի քանի հազարամյա հնության առարկաների ու սարքերի մոդելները:

Իրապես բարձր գնահատելով հնագետ Իվան Անդրեի Սեմյանի ատենախոսական աշխատանքը, այսուհանդերձ ցանկանում ենք կատարել մի քանի դիտարկումներ, որոնց հնարավոր շտկման պարագայում, աշխատանքը կդառնար առավել շահեկան, ամբողջական ու ընդգրկուն:

1. Քանի որ քննարկվող նյութը որոշակի առումով առնչվում է նաև հնդեվրոպական էթնիկ տարրի պարբերական տեղաշարժերի հետ, ապա վատ չէր լինի սույն ատենախոսության մեջ տեսնել նաև հեղինակի վերաբերմունքն ու մոտեցումն այդ գործընթացների վերաբերյալ: Առավել ևս, որ նրան ծանոթ են Մարիա Գիմբուտասի, Դեյվիդ Էնթոնիի, Թամազ Գամկրելիձեի, Վյաչեսլավ Իվանովի և այլոց մոտեցումներն այդ հարցում:

2. Աշխատանքի գիտական արդյունքներին կնպաստեր նաև 2012 թ. Լոնդոնի Բրիտանական թանգարանում Ջոն Կըրտիսի և Նայգել Թալլիսի հրատարակած «Ձին ("The Horse")» հիմնարար հետազոտության օգտագործումը:

3. Աշխատանքում հեղինակն օգտագործել է նաև թեմային առնչվող հայ հնագետների որոշ հրատարակություններ: Այս առումով, կարծում ենք, որ Ստեփան Եսայանի 1966 թ. լույս տեսած «Оружие и военное дело Древней Армении» մենագրությունից զատ, հատկապես մարտակառքերին վերաբերող իմպիրները քննարկելիս, վատ չէր լինի օգտագործել նրա 1980 թ. հրատարակված «Скульптура Древней Армении» աշխատանքը:

4. Ձիու, ձիաբուծության և անվավոր փոխադրամիջոցներին առնչվող հարցերը քննարկելիս, կարծում ենք տեղին կլիներ նաև Հակոբ Սիմոնյանի Վերին և Ներքին Նավեր հնավայրում իրականացրած երկարամյա պեղումների ժամանակ հայտնաբերած ձիերի պատկերներով միջինբրոնզեդարյան անոթների և բրոնզե ձիասանձի մասին հիշատակումները:

5. Աշխատանքը տեխնիկական խմբագրման կարիք ունի: Բովանդակության մեջ նշված էջերը, երբեմն չեն համընկնում որոշ ենթագլուխների էջակալմանը:

6. Սեղմագրին կցված հայերեն հավելվածի վերնագիրը, մեր կարծիքով, մասամբ շտկման կարիք ունի: Այն ձևակերպված է այսպես. «Սինտաշտյան և պետրովսկյան բրոնզեդարյան մշակույթների ռազմական գործը փորձարարական հնագիտության լույսի ներքո»: Նախ «Պետրովսկյան մշակույթ» ձևակերպման մասին: Այդ մշակույթը 1975 թ., առաջին անգամ, առանձնացրել է հնագետ Գենադի Բարիսովիչ Զդանովիչը Պետրովկա բնակավայրի մոտ իրականացրած պեղումների արդյունքում և այն անվանել «Петровская культура»: Այսինքը՝ հայերենում այն պետք է ներկայացվեր ոչ թե «Պետրովսկյան մշակույթ», այլ՝ «Պետրովյան մշակույթ» ձևով: Բացի այդ, կարծես թե շեղում կա նաև ընդհանուր վերնագրի թարգմանության մեջ: Ռուսերեն բնօրինակին հարազատ մնալու համար, ճիշտ կլիներ «Սինտաշտյան և պետրովյան բրոնզեդարյան մշակույթների ռազմական գործը հնագիտական փորձարարության լույսի ներքո» տարբերակը, այլապես առկա հայերեն վերնագրի պարագայում ռուսերեն վերնագիրը պետք է որ հնչի այսպես. «Военное дело Синташтинской и Петровсквой культур в свете экспериментальной археологии»:

Անտարակույս արված դիտարկումներն ու առաջարկությունները բացառապես խորհրդատվական բնույթ ունեն և ոչնչով չեն նսեմացնում Իվան Անդրեի Սեմյանի կատարած իրավամբ լուրջ, բարդ ու համակողմանի աշխատանքը: Աշխատանքի սեղմագիրն ու նրանում ներկայացված ատենախոսի հրատարակությունները լիովին արծարծում են այն հիմնախնդիրներն ու դրույթները, որոնք ներկայացված են ատենախոսության մեջ:

Ըստ այդմ, Իվան Անդրեի Սեմյանի «Սինտաշտյան և պետրովսկյան բրոնզեդարյան մշակույթների ռազմական գործը փորձարարական հնագիտության լույսի

ներքո» խորագրով պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ներկայացված ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ ԿԳՄՍ նախարարության ԲՈԿ-ի կողմից թեկնածուական գիտական աշխատանքներին ներկայացվող պահանջներին և հեղինակը միանգամայն արժանի է իր հայցած պատմական գիտությունների թեկնածու գիտական աստիճանին:

Կարծիքը հաստատված է ամբիոնի 2024 թ. դեկտեմբերի 13-ի նիստում /արձանագրություն թիվ 6/:

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ Հայոց պատմության
ամբիոնի վարիչի պաշտ. պրոֆ. Է. Գևորգյան

Պատմ. գիտ. թեկնածու, պրոֆեսոր Է. Գևորգյանի
ստորագրությունը հաստատում եմ:
ՀՊՄՀ գիտ. քարտուղար դոց. Մ. Իսպիրյան
13.12.2024 թ.